ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 51-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերը և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 5-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բժշկական ապահովման վարչությունը միացման ձևով վերակազմավորել հոգեբանական աջակցության և բժշկական վարչության.

2) 25-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«1) Հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչությունը.»,

բ. 21-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2 . Փրկարար ծառայության տնօրենին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո՝ 2-օրյա ժամկետում կատարել համապատասխան փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և փրկարար ծառայության տնօրենի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 17/587-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 15-Լ հրամանում:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

19.07.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ